«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 4(5)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№4(5)

ԵՐԵՎԱՆ 2019

Հանդեսը տպագրվում է «Զորավար Մեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա,Ստամբուլ),
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Համլետ Գևորգյան, Հովսեփ Աղաջանյան, Մարտին Գիլավյան,
Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ[1]

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԴԱՐՅԱՆ

Բանալի բառեր - Կոստանդ Ջուղայեցի, վաճառականական ձեռնարկ, Նոր Ջուղա, ձեռագիր, հիշատակարան, վաճառական։

Մուտք

1697 թվականի օգոստոսի 28-ին հայ վաճառական Ավետը, Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանից մեկնելով Հնդկաստանի շահութաբեր քաղաքներից մեկը՝ Սուրաթ, իր առևտրական ուղևորության մասին մի գրառում է թողնում իր ձեռքի տակ եղած ձեռագրի դատարկ էջին. «Ա(ստուծо)վ փոքր թիւն ձբ [82+1615=1697] նադար ժա-ումն… Աւետս Ըս-պահանայ վերկացի դապի Սուրաթն»[2]: Ավետը մեկն էր այն հազարավոր հայ վաճառականներից, որոնք հատում էին համաշխարհային առևտրի ցամաքային ու ծովային ուղիները և կարևոր դերակատարություն ունենում վաղ արդի դարաշրջանի[3] առևտրատնտեսական կյանքում: Ձեռագիրը, որը Ավետը հավանաբար իր հետ տարել էր Սուրաթ, ներառում էր Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկ-դասագրքերը, որոնք պարունակում էին հայ վաճառականներին ուղղված առևտրական բազմաբնույթ ու բազմակողմանի տեղեկատվություն: Ինչպես Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները, այնպես էլ հայ վաճառականական գրականության մյուս նմուշները, չնայած իրենց բացառիկ կարևորությանը, մինչ օրս գրեթե դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից:

Սեֆյան մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Ջուղան, որի պատմությունը սկիզբ էր առել 17-րդ դարասկզբին շահ Աբբաս I-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթից, կարճ ժամանակում վե-

---

[1] Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանին Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թիվ 64 և Օքսֆորդի Բոդլեյանի գրադարանի թիվ 14 ձեռագրերի թվային պատճենները մատչելի դարձնելու համար, ինչպես նաև՝ Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի գիտաշխատող Խաթունա Գափրինդաշվիլիին Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 8443 ձեռագրի վրացերեն ու վրացատառ հիշատակարանները վերծանելու համար:

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 2բ:

[3] Վաղ արդի հայոց պատմության՝ որպես առանձին պատմափուլի յուրահատկություններին դիպուկ վերհանման համար, հղված գրականությամբ հանդերձ, տե՛ս **Aslanian S.**, Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture, “Book History”, no. 17, 2014, pp. 53-58:

րածվեց իրանական մետաքսի արտահանման պետական մենաշնորհ ունեցող ջուղայեցի վաճառականների կենտրոնի: Վերջիններիս գործունեության աշխարհագրական սահմանների ընդլայնմանը զուգընթաց՝ 17-րդ դարի երկրորդ կեսին Նոր Ջուղան դարձավ հայկական առևտրական ցանցի կենտրոն, ցանց, որը ձգվում էր Մանիլայից մինչև Լոնդոն ու Ամստերդամ[1]:

Վաղ արդի դարաշրջանի համաշխարհային առևտրում հայ վաճառականների խաղացած դերակատարությունն այնքան տպավորիչ էր ու բացառիկ, որ ֆրանսիացի հանրահայտ պատմաբան Ֆեռնան Բրոդելն իր «Քաղաքակրթությունն ու կապիտալիզմը, 15-18-րդ դարեր» դասական աշխատության երկրորդ հատորում այն բնորոշել է որպես «կախարդական հաջողություն»[2]: Փորձելով բացատրել հայ վաճառականների «կախարդական հաջողությունը» առևտրի ասպարեզում՝ Սեֆյան Իրանի պատմության նշանավոր հետազոտող Ռուդի Մաթին մատնանշել է մի քանի պատճառ, այդ թվում՝ «շուկաների ու ճանապարհների նրանց (հայերի - Ս. Բ.) գերազանց իմացությունը»[3]: Առևտրական տեղեկատվության կամ «առևտրի գաղտնիքների»[4] հարցում հայերի քաջատեղյակությունը, որը արդյունքն էր տեղեկատվության փոխանցման ու ստացման զարգացած համակարգի առկայության, իսկապես հանդիսացել է հայ վաճառականների հաջողության գրավականներից մեկը: Բավական է նշել, որ նախքան առևտրի աշխարհ մուտք գործելը ջուղայեցի վաճառականները հնարավորություն ունեին առևտրական կրթություն ստանալու Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում, որտեղ իր իսկ դասագրքերով առևտրական դասընթաց էր վարում Կոստանդ Ջուղայեցին: Վերջինիս դասագրքերը, այդ դպրոցում գործածվելուց բացի, ծառայում էին որպես ուղեցույց վաճառականների ուղևորությունների ընթացքում ու, այդպիսով, կայուն շրջանառություն ստանում Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում[5]:

---

[1] Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի աշխարհագրության մասին առավել մանրամասն տե՛ս **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley: University of California Press, 2011, pp. 44-85 և **Herzig E.**, The Armenian Merchants of New Julfa, Isfahan: A Study in Pre-Modern Asian Trade, St. Antony's College, Oxford University, 1991, Unpublished PhD thesis, pp. 119-151:

[2] **Braudel F.**, *Civilization and Capitalism, 15th-18th Century*, vol. 2: The Wheels of Commerce, New York, 1983, p. 158.

[3] ***Matthee R.***, *Merchants in Safavid Iran*: *Participants and* Perceptions, "Journal of Early Modern History", 4/3-4, 2000, pp. 237-238.

[4] **Markovits C.**, The Global World of Indian Merchants, 1750–1947: Traders of Sind from Bukhara to Panama, New York: Cambridge University Press, 2000, p. 25.

[5] Այս փաստի վրա ուշադրություն է հրավիրել միայն Սեպուհ Ասլանյանը՝ **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean, p. 137.

Առաջին ամբողջական վաճառականական ձեռնարկներն ի հայտ են եկել 14-րդ դարի առաջին կեսին Հյուսիսային Իտալիայում[1]: Դրանք նպատակ ունեին վաճառականներին ապահովելու այն բազմաբնույթ տեղեկատվությամբ, որի կարիքը նրանք զգում էին առևտրական գործունեություն ծավալելիս: Ուշ միջնադարում ստեղծված համանման աշխատություններից ամենահայտնին Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտտիի ձեռնարկն էր՝ «Երկրների նկարագրությունների գիրք» վերնագրով (շուրջ 1340 թվական)[2]: Վաղ արդի դարաշրջանում համաշխարհային առևտրի ծավալման աննախընթաց տեմպերը խորացրին առևտրական տեղեկատվության շրջանառության պահանջարկը, և վաճառականական ձեռնարկների շարադրման գործը նոր թափ ստացավ: Վաճառականական ձեռնարկների բազմահատոր մատենագիտության տվյալներով՝ 15-րդ դարավերջից մինչև 19-րդ դարասկիզբը Եվրոպայում տպագրված վաճառականական ձեռնարկների թվաքանակը հատում է 12000-ը[3]:

Պատահական չէ, որ համաշխարհային առևտրում իրենց ուրույն դերակատարությունն ունեցած հայ վաճառականներն ունեցել են իրենց իսկ ձեռնարկ-դասագրքերը: Երբևէ չուսումնասիրված այս երկերի շարքում իրենց կարևորությամբ նախնառաջ առանձնանում են Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկները՝ «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին» վերնագրերով: Դրանց ամենավաղ օրինակները վերաբերում են 1687 թվականին: Որքան էլ զարմանալի է, վաճառականական շրջանակներին հասցեագրված այս երկերն այդպես էլ չեն տպագրվել հայկական գրատպության վերելքի պայմաններում և մեր օրերն են հասել ձեռագիր մատյանների ընդօրինակությունների տեսքով: Կոստանդ Ջուղայեցու աշխատությունների անտիպ մնալու պատճառը հավանաբար պետք է որոնել տպագրական գործի կազմակերպման այն դժվարությունների մեջ, որոնք առկա էին Նոր Ջուղայում 17-18-րդ դարերի սահմանագծին: Մասնավորապես՝ այդ խոչընդոտների մասին պատկերացում են տալիս Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցու նամակները՝ ուղղված Եվրոպայի առևտրական կենտրոններում բնակություն

---

[1] **Aurell J.**, *Reading Renaissance Merchants' Handbooks*: Confronting Professional Ethics and Social Identity, in: Ehmer J. and Lis C. (eds.), The Idea of Work in Europe from Antiquity to Modern Times, Farnham: Ashgate, 2009, p. 75.

[2] Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտտիի հանրահայտ ձեռնարկի լատիներեն բնագիրը, Ալլան Էվանսի ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հանդերձ, տե՛ս ***Francesco Balducci Pegolotti***, *La pratica della mercatura*, edited by Allan Evans, Cambridge: The Mediaeval Academy of America, 1936.

[3] **Hoock J. and Jeannin P. (eds.)**, Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, 1470-1820: eine analytische Bibliographie = Ars Mercatoria: manuels et traités à l'usage des marchands, 1470-1820, 3 vols., Paderborn: Schöningh, 1991-2001.

հաստատած հայ վաճառականներին[1]: Եվրոպայից Նոր Ջուղա տպագրական պարագաներ ուղարկելու Ստեփանոս Ջուղայեցու խնդրանքների անարձագանք մնալը գրեթե բացառում էին ջուղայեցի հեղինակների, այդ թվում՝ Կոստանդ Ջուղայեցու աշխատությունների տպագրության հնարավորությունը: 20-րդ դարի երկրորդ կեսին «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին» ձեռնարկների բնագրերը հրատարակելու մի քանի ուսումնասիրողների (Հակոբ Անասյան, Ռաֆիկ Աբրահամյան) մտադրությունները, ցավոք, մնացել են անկատար, իսկ այդ երկերը՝ մինչ օրս անտիպ[2]:

Այս պայմաններում զարմանալի չպետք է համարել Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթի վերաբերյալ հայտնի տեղեկատվության սահմանափակ բնույթը: Ուսումնասիրողներն ուշադրություն են հրավիրել այդ ձեռնարկ-դասագրքերն ընդգրկող միայն 3 կամ 4 ձեռագրերի վրա[3]: Մեզ հայտնի տվյալների ամբողջացումը, սակայն, թույլ է տալիս եզրակացնել, որ ձեռնարկների բնագրերը պահպանվել են 6 ձեռագիր մատյաններում, որոնցից 3-ը գտնվում են Երևանում, 2-ը՝ Լոնդոնում, 1-ը՝ Նոր Ջուղայում:

Այս հոդվածը նպատակ ունի ներկայացնելու Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին» վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթը: Աշխատանքի առաջին մասում անդրադարձ է կատարվում այն ձեռագրերին, որոնք ընդգրկում են ձեռնարկների ամենավաղ, այն է՝ 1687 թվականին վերաբերող ընդօրինակությունները: Ուսումնասիրության հաջորդ մասը նվիրված է ջուղայեցի հեղինակի երկերի հետագա ընդօրինակություններն ընդգրկող ձեռագրերին: Առանձնակի ուշադրություն է հրավիրվում ձեռագրերի երբևէ չհրատարակված

[1] Ստեփանոս Ջուղայեցու այս նամակները պահպանվել են Ֆլորենցիայի պետական արխիվում՝ Archivio di Stato di Firenze, Acquisti e Doni, busta 123, Documenti Armeni Inserto 1, 1-38: Դրանցից երկուսի հրատարակության համար տե՛ս **Aslanian S.**, The *Early Arrival* of Print in Safavid Iran: New Light on the *First* Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636–1650, 1686-1693), "Handes Amsoreay", 2014, no. 1-12, pp. 453-468:

[2] «Աշխարհաժողով» առևտրական ձեռնարկի միակ հրատարակված փոքրածավալ հատվածը տե՛ս **Փափազյան Վ.**, «Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հալեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թ. 6, էջ 80-85, նույնի, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, 1990, 160-163:

[3] Կոստանդ Ջուղայեցու երկերի ձեռագրերի մասին ցայսօր եղած դիտարկումներից առավել ամբողջականը Սեպուհ Ասլանյանինն է, որը, սակայն, ներկայացնում է ընդամենը 4 ձեռագրերի՝ Մատենադարանի 2 և Նոր Ջուղայի ու Օքսֆորդի 1-ական օրինակների մասին տվյալներ (**Aslanian S.**, From the Indian Ocean, p. 280, n. 43): Սմբատ Հովհաննիսյանն ու Վահան Փափազյանը, իրենց հերթին, հիշատակել են Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների միայն 3 ձեռագրերի մասին (**Հովհաննիսյան Ս.**, Հայ առևտրական կապիտալն իբրև «աշխարհտնտեսություն», «ՎԷմ», 2017, թ. 1, էջ 59, **Փափազյան Վ.**, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, էջ 14):

հիշատակարաններին, որոնք ոչ միայն հնարավորություն կարող են տալ ուրվագծելու ձեռագիր մատյաններից յուրաքանչյուրի անցած ճանապարհը, այլև նպաստում են ձեռնարկների գործածության աշխարհագրական սահմանների մասին մեր պատկերացումների խորացմանը:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների վաղագույն ընդօրինակությունները (1687 թ.) - Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկ-դասագրքերի վաղագույն ընդօրինակությունները վերաբերում են 1687 թվականին: Հատկանշական է, որ այդ թվականին են գրվել մեզ հասած ձեռագրերից միանգամից 3-ը, ընդ որում՝ նույն վայրում՝ Նոր Ջուղայում: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Կոստանդ Ջուղայեցին իր երկերն ամբողջացրել է հենց 1687 թ., և նույն այդ ժամանակ էլ սկիզբ է առել դրանց բնագրերը ձեռագրերում ընդօրինակելու գործը: Ձեռնարկների վաղագույն այս տարբերակները պարունակող ձեռագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում և Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում: Եթե երևանյան օրինակի առավել հատկանշական բնութագրիչը հենց հեղինակի գրչի արգասիք լինելն է, ապա մյուս 2 ձեռագրերը կարևոր են բնագիրն առավել ամբողջականորեն արտացոլելու տեսանկյունից: Ուստի՝ ձեռագրական ավանդույթի ներկայացումը նպատակահարմար է սկսել հենց դրանցից:

Ա. Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64: Գրչության թվական՝ 1680-1695 թթ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Ստացող՝ Աւետ: Թերթ՝ 322: Թուղթ, 15 x 10: Տող՝ 15: Միասիւն: Նոտրգիր: Նկարագրել է Ս. Տեր-Ավետիսյանը 1970 թ.[1]:

Ձեռագրի առաջին մասը (թ. 7ա-156ա) զբաղեցնում են Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները հետևյալ խորագրով՝ «Վասն նորայյուս մանկանց եւ երիտասարդաց վաճառականաց խրատ»: Երկու ձեռնարկների միջև գրված հիշատակարանում գրիչը նշել է ընդօրինակության վայրն ու ժամանակը՝ «Ըսպահան՝ Ջուղայու վանք Սուրբ Ամենայփրկչումն, թիւն Փրկչին ՌՈՁԷ (1687)» (հիշատակարան 14): Ձեռագիր այս մատյանի մնացած մասերն այլ ժամանակի ընդօրինակություն են: «Հարցմունք և պատասխանիք» խորագրով կրոնական հարցուպատասխանը, օրինակ, արտագրվել է 1685 թ., իսկ «Պատմութիւնս Խիկարայ Հիմաստնոյ» բնագիրը՝ 1695 թ. (հիշատակարաններ 15, 18):

Հատուկ ընդգծման կարիք ունի այս ձեռագրի հարուստ լինելը բազմաթիվ հետաքրքիր հիշատակարաններով, որոնք այս գրչագիր օրինակն առավել բնութագրական են դարձնում: Այս հիշատակարանները, որոնց թվաքանակը հատում է երկու տասնյակը, հիանալի հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու վաճառականական միջավայրում ձե-

[1] Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հատոր Ա, կազմեց՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 857-858:

ռագրի, դրանով իսկ՝ ձեռնարկների շրջանառության մասին[1]։ Առևտրական այս ձեռնարկներից օգտվող վաճառականներից Ավագը, օրինակ, բավարարվել է Սպահանից իր հեռանալն արձանագրելով՝ առանց նշելու ուղևորության նպատակակետը՝ «ես՝ Աւաքըս, Ըսպահանայ վերկացի» (հիշատակարան 3), իսկ Ավետի առևտրական գործունեության երթուղին առավել մանրամասն է պատկերված։ Այսպես՝ 1697 թ. վերջինս ճանապարհ է ընկնում դեպի Սուրաթ, 1701 թ. արդեն Հովհաննեսի հետ իր գործունեությունը շարունակում է Եվրոպայում, իսկ 1705 թ. նա ուղևորվում է Հյուսիսարևելյան Իրան՝ Մաշհադ (հիշատակարաններ 2, 10, 11)։ Առևտրական բնույթի հետաքրքիր գրառում է նաև ձեռագրի վերջին թերթին 1764 թ. թողնված խիստ դժվարընթեռնելի գրանցումը, ուր ներկայացված են մի քանի ապրանքների գներ (հիշատակարան 25)։ Իրենց գործունեությանն առնչվող տվյալների գրանցումից բացի՝ վաճառականները հարկ են համարել ձեռագրում թողնել նաև ընտանեկան գրառումներ։ Այսպես՝ դրանցից մեկը վերաբերում է Հովհաննեսի դստեր ծննդյանը 1701 թ. հուլիսի 2-ին՝ «փոքր թիւն ձզ նախ(ա)յ գ՝ օրն շաբաթ, պ(ա)ր(օ)ն Յովանին աղչիկ ելաւ՝ անունն Որուղլու» (հիշատակարան 4)։ Հիշատակարաններից մյուսն էլ արձանագրել է Հարությունի հարսանիքը «փոքր թիւն ձէ համիրայ ի-ումն», այսինքն՝ 1702 թ. դեկտեմբերի 16-ին (հիշատակարան 1)։ Այսպիսով՝ այս ձեռագիրը հատկանշական է թե՛ վաղագույն գրչագիր օրինակների շարքում լինելու և թե՛ հիշատակարանային հարուստ նյութ պարունակելու տեսանկյունից։

Հիշատակարաններ

Հիշատակարանային այս նյութը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով՝ ամենևին չունենք առավել ճշգրիտ վերծանությամբ հանդես գալու հավակնություն, հատկապես այն դեպքում, որ բազմաթիվ են անընթեռնելի գրառումների տպավորություն թողնող հատվածները։ Կարծում ենք, որ վաճառականական ձեռնարկների ձեռագրերում հանդիպող հիշատակարանների այսօրինակ ներկայացումն արդյունավետ է ինչպես ձեռագրական ավանդույթի մասին ավելի լայն պատկերացում տալու, այնպես էլ՝ բազմաթիվ անտիպ հիշատակարաններ մասնագետների ուշադրությանը ներկայացնելու տեսանկյունից։

1. **2ա** Ա(ստուծ)ով փոքր թիւն ձէ համիրայ ի-ումն (1702)՝ Ս(ուր)բ Յակոբ բարիկենդան՝ շաբաթ օրն, հարսանիք ելաւ։ Յարութիւնին, Տ(է)ր Ա(ստուա)ծ, որ վէրեն՞ նայի, յիշատակ խաղաղութիւն լինի։

[1] Նոր Ջուղայի առևտրական ցանցում Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների շրջանառության մասին տե՛ս **Baldaryan S.**, An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His Compendium and the Dissemination of Information in the Julfan Trade Network, Paper Presented at the 17th Graduate Student Colloquium in Armenian Studies, UCLA, February 15, 2019.

2. **2բ** Ա(ստուծо)վ փոքր թիւն ձբ նաղար ժա-ումն (1697) արեամբ գնել՞ Ք(րիստոս)ի ծառայ Աւետս Ըսպահանայ վերկացի դապի Սուրաթն։ Տ(է)ր Ա(ստուա)ծ բարի ճանապահր տայ, որ բարով սալամաթ գնանք գուք՞։

3. **2բ** Ա(ստուծо)վ փոքր թիւն ձբ թիրայ դ-ումն (1697) ես՝ Աւաքըս, Ըսպահանայ վերկացի։

4. **2բ** Ա(ստուծо)վ փոքր թիւն ձզ նախ(ա)յ գ (1701)՝ օրն շաբաթ, պ-(ա)ր(о)ն Յովանին աղչիկ ելաւ՝ անունն Որուղլու։ Ա(ստուծо)վ ծառ(ա)յ … (ա)մենայփրկչին։

5. **2բ** որ ժէ տարայկան ի, որ ջուր հօրեաց բարիկենդեան կը մտի ժդ՞։

6. **3ա** Թիվն փոքր աճլթ-ումն դամայ իէ-ումն (1754)՝ օրն շ(ա)բ-(ա)թ, էլչին, որ եկէլ էր ազատ շունին կուշտն, որ կանանեքըն տանէր, տա-բան որ է վերևն՞ ինչ թրղայ՞ գրած էնչաղն տարան որ է Բաղդադ։

Վրացի Մարգրն էր, Մանուկին նօքար Մարգարն էր, Մանուկն էր, լալաջ՞ Քէրոզետն՞ էր, Օվովն էր, չիովին՞ ա(ստուա)ծ որէնց բ(ա)նըն յ-(ա)ջողի, բ(ա)ր(о)վ յետ գոն, իշալ(ա)յ։

7. **4ա** Ա(ստուծо)վ փոքր թիվն հայոց աճխա շբ(ա)թ լ-ումն (1756) գրվեցա ես՝ ողորմած հոգի Յիսայէ որդի Մանուկս, գրեցի աս իմ ծնօղացն Մէրխաթունին։ Ով որ սմայ հանդիպի, թէ սաղամ յեատս խէր առի, թէ մե-ռած գնջամ, մին բերան հարմեր, մին բերան ողջումն ասի, ա(ստվա)ծ ու-րեանց ն(ն)ջեցելոցն ողորմի։ Փառք յաւիտեանս։ Ամէն։ Վերջ։

8. **5ա** Ա(ստուծо)վ թիվն փոքր ոծ՞ ղամար ժգ գրեցի երկու շաբաթ Մանուկն ախբէր Յուսէփն Ա(ստուա)ծ Յուսէփն բախի ճ տարական դա-ռան։ Ամէն։

9. **6ա** Ա(ստուծо)վ թիվն ռճծ (1701) ղամար ժգ Յովանն օրն ուրբաթ գնացին դապի և Աւետնն Ֆռանգըստան։ Ա(ստուա)ծ ուրէնց բան, աչն ա-ջողի։ Ա(ստուա)ծ յերկար ումբր տայ և ամենեցուն։ Ամէն։

10. **6ա** Ա(ստուծо)վ փոքր թիվ ձթ ովտան ամիսի ե (1705)՝ օր ուր-բաթ, Աւետն գնաց Մաշատ, բարով գոյ եսսարաղ՞ գրէց։ Վերջ։ Ամէն։

11. **6բ** Ա(ստուծо)վ փոքր ձբ թիրայ ժա (1697) լուս երկուշաբաթ գիշեր, արագունէն գ շաբաթ անցանց, խօջայ Յովանէսն ծնաւ ի մօրէն։ Տ(է)ր Ա(ստու-ա)ծ մնացական պահի, որ ս[ուր]բ Յովանիսի ծառայ, որ օգնական լինի։

12. **7ա-7բ** Օգնեա՛յ մեզ, մարդասէ՛ր ս(ուր)բ հոգի, և հա՛ս ի թիկունս տկարութեան մերում։ ՌՈՉԷ (1687), որ թիւն է մեր փրկչին, գրվեցաւ գիրքս այս, արվեստին խիստ է, բարի հիմանողին, դռներն էս այ ռաղա-մին, անհասանելի է ամ(ենք)ին, բաւական է այսքան շրջողին, միտքն բո-լորվի ուսանողին։ Ես աշակերտ եմ, վարպետին տամ ողորմի յարարժա-մի, արժան լինի նայ դրախտին։

13. **46բ** Շարայդրեցաւ բանք աս աշխարայժողով փոքր ի շատէ վ-(ա)սն վաճառականաց գնելոյ և վաճառելոյ, որ նորայվարժ մանկունք, որ

փոքուտ ուսանեն վ(ա)սն ի պէտս ապայգայից իւրեանց, որ եղեւ Ըսպահան՝ Ջուղայու վանք Սուրբ Ամենայփրկչումն, թիւն Փրկչին ռռձէ, ի թագաւորութեան Շահ Սլէմանին և կաթողիկոսութեամբ Տ(եառ)ն Եղիազարու և առաջնորդութեամբ Ըստէփանոս վարդապետին և իշխ(ա)նութեամբ քալանթար խոջայ Ղուգասին և աշխ(ա)տութեամբ ան(ա)րժ(ա)ն մեր վարպետ Կոստանդին, յիշեցէք ի ս(ուր)բ յաղօթս ձեր և դուք յիշեայ լիջիք ի Ք(րիստո)ս։ Ամէն։

14. **232ա** Գրվեցաւ պատմութիւնս Խիկարայ Հիմաստնոյ, յիշատակ միանակաց անարժան Աւետին, թիւն Փրկփին ՌՈՂԵ (1695), և որք հանդիպէք սմայ կալդալով կամ օրինակելօվ, աղաջեմ զձեզ ի խորոց սրտէ և լի բերանով ողորմի շնորեցէք և դուք յիշեալ լիջիք ի Ք(րիստո)ս։ Ամէն։ Հար մեր, որ յերկինս ես։

15. **251բ** Ա(ստուծ)ով փոքր թիվն ձբ թիրայ դ-ումն ես՝ Աւետս, Ըսպայհանայ վերկացի։ Ամէն։

16. **251բ** Ա(ստուծ)ով փոքր թիվն ճժդ շբ(ա)թ իբ-ումն ես՝ Վարդանս, Ըսպայհանայ վերկացի։ Ամէն։

17. **252ա** Հարցմունք և պատասխանի արարեալ ամեն միանակաց Կոստանդ՝ դպրապետ բճծ մանկանց, գիր ուսուց… ողականաց՞ և որ ռաղամ և տոմար ժողովեալ հին և նոր կտակ(ա)բանաց և սուրբ վարդապետաց վա(ս)ն նորայվարժ մ(ա)նկ(ա)ց քրիստոնէից թիւն Փրկչին ՌՈՁԵ-ումն (1685) հարցմունք և պատասխանի։

18. **278ա-8բ** Շարայդրեցաւ բանքս Ա(ստուծ)յ Ըսպահան Ջուղայու վանք Ս(ուր)բ Ամենայփրկչումն, թիւն Փրկչին ՌՈՁ-ումն (1680), ի թագաւորութեան Շահ Սուլթան Յուսէն, դինն փ(ա)րի, ումբրն դրազ, դոլվաթ զիաթ, դուշման Ֆանայ։ Եւ կաթողիկոսութեան Տ(եառ)ն Եղիազար և առաջնորդութեամբ Ըստէփանոս վարդապետին եւ իշխանութ(եամ)բ քալանթար խոջայ Ղոգացին և աշխատութեամբ անարժան մեր վարպետ Կոստանդին, յիշեցէք ի ս(ուր)բ յաղօթս ձեր և դուք յիշեայ լիջիք ի Ք(րիստո)ս։ Ամէն։

19. **307բ-8ա** Գրվեցաւ թ(ի)վն ռմ (1751) թի՞։ Յիշեցէք մասկուր մեղաւոր անարժան պարտական ս(ուր)բ ասլիջանին օվ ա(ստուծ)յ սէր կայրդացօղք և ընդձօղք սէրն ա(ստուծ)յ յիշէցէք ծառայ ա(ստուծ)յ սիրաց ոտաց հող եւ մոխիր ողորմի փող ի մահ սարգավարգ Կարայպեդն, ախբէրն Մկրտիճն, հայգուց ախբէրն Ոսկան, քուրն Ոսկէհատրն, հագուցեալ քուր Վարդէշաղն։ Ծնօղքն՝ Սարքիսն, մէրրն հէրիկն, մահրում կօղայկիցն Դիշխուն, ողորմի ա(ստուա)ծ ասացէք, յիշայ լցիք… ա(ստուծ)յ հար մեր։ (Ա)մէն։

20. **310բ** ես՝ Սահակ, գրեսցին

21. **310բ** լուսայհոգի Սարքիսի կողայկիցն՝ Հէրիկն, որ փոխեցաւ առ ա(ստուա)ծ, թի(վ)ն էր ռմժզ-ումն (1767)՝ հրեշտաց պասին շաբաթ օրն։ Օվ

օր հանդիբի, տէրն ա(ստուծո)յ ա բերան հար ասէ, ա(ստուա)ծ ուրն հօրն և մօրն դրախտի արժանի անէ։

22. **321ա** Ես՝ ողորմած հոգի Յիսայէ որդի Մանուկս, գրեցի։ Օվ, օր սմայ հանդիպի, մին բերան յիշի, թիվն փոքր աճխ (1755)։

23. **321ա** Կնիք փակագրով՝ Քրիստոսի ծառա Կարապետ։

24. **322ա** թիւն ռմծգ-ին (1764)

գլխի փող գլուխն մծզ կօվն մձ կօվն էլ մ… շթիղա րբալ աճզ

մլքի տվինք գռեճ (3500) դ(իա)ն

միրզին աճձ (180) ալի ղալայ սօխրքին

թճզ (906) սատիրի փո թսալաքիգոծել

դճծ (450) խալվարի ղսալուղ դճ

25. **322բ** նիրն ժե-ումն թամամեցաւ գճխգ (343) թուխայ՞

Բ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 8443: Գրչության թվական՝ 1687 թ.: Տեղ՝ Նոր Ջուղա։ Գրիչ՝ Կոստանդին դպրապետ։ Թերթ՝ 248։ Թուղթ։ 16,1 x 10,5 – 11։ Միասյուն։ Նոտրգիր։ Նկարագրվել է 1970 թ.[1]։

Ձեռագիրն ընդօրինակվել է 1687 թ., ինչը հաստատում են գրչի թողած 2 հիշատակարանները։ Նախ՝ «Աշխարհաժողով»-ում գրիչը հավաստում է, որ երկն ընդօրինակվել է «Ըսպահան՝ Ջուղայու վանք Ս(ուր)բ Ամենափրկչումն, թ(ի)վն Փրկչին ռզճձէ (1687)», ապա նույն տարեթիվը հաստատվում է նաև «Վիճաբանութիւն հոգւոյ ընդ մարմնոյ» երկի հիշատակարանում՝ «թ(ի)վն Փրկչին ռզճձէ (1687)» (հիշատակարաններ 1,4)։ Հետագայի հիշատակարանները թույլ են տալիս որոշ չափով ուրվագծել ձեռագրի անցած ուղին։ 1692 թ. Սաֆարի գրանցման մեջ այն արդեն հիշատակվում է Շիրազում։ Ավելի քան 100 տարի անց գրված վրացատառ ու վրացերեն հիշատակարաններում հանդես են գալիս Թիֆլիսն ու Թավրիզը։ Հետաքրքրական են նաև ձեռագրի տարբեր մասերում վրացերեն կարճ գրությունները, որոնք կարող են գրված լինել վրացական միջավայրում գործած հայ վաճառականներից մեկի կողմից։ Պատահական չէ վրացերեն հիշատակարաններից մեկի տարեթիվը՝ 1796 թ., երբ հայ-վրացական առևտրատնտեսական կապերը զգալիորեն աշխուժացել էին[2]։

Այս ընդօրինակությունը ևս փաստում է առևտրական ձեռնարկների ձեռագրերում վաճառականների կողմից ընտանեկան գրություններ թողնելու երևույթը։ Այսպես՝ Հովանջանը հստակ թվագրությամբ թողել է իր երեխաների ծննդյան մասին արձանագրումներ, որոնք վկայում են 1698-

[1] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան**, Երևան, 1970, էջ 745։

[2] Տե՛ս, օրինակ, **Մարտիրոսյան Վ.**, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլի-Կախեթի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, թ. 11, էջ 65-71։

1701 թթ. ծնված նրա 2 որդիների՝ Ծատուրի ու Դիլաքի և 1 դստեր՝ Մերջանի մասին։ Նշենք, որ նմանօրինակ վկայությունները կարևոր կարող են լինել երեխաների անվանակոչության միջոցով հայ վաճառականների էթնոմշակութային դիմապատկերն ուրվագծելու տեսանկյունից։

Ինչ վերաբերում է վաճառականական ձեռնարկների բնագրերին, ապա դրանք զբաղեցնում են 149ա-248բ թերթերը։ Ընդ որում, ընկած են թերթեր ինչպես սկզբից, այնպես էլ վերջից։ Բնագրում բացակայում է հատկապես «Աշխարհաժողով»-ի սկիզբն ընդգրկող բավական մեծ հատված։ Թերի լինելով հանդերձ՝ այս ձեռագիրը չի կորցնում իր կարևորությունը, քանզի ընդօրինակված է հենց հեղինակի ձեռքով։

Հիշատակարաններ

1. **137ա** Շարադրեցաւ բանքս այս Իսպահ(ա)ն՝ Ջուղայու վանք Ս(ուր)բ Ամենափրկչումն, թ(ի)վն Փրկչին ռզճձէ (1687) ի թագաւորութե(ան) շահ Սուլէմանին և կաթուղիկոսութ(եամ)բ Տեառն Եղիազարու հայրապետին և առաջնորդութ(եամ)բն Ըստեփաննոս վարդապետին և իշխանութ(եամ)բ քալանթար խօճայ Աւետսին և աշխատութ(եամ)բ անարժան միայնակաց դպրապետ Կոստանդին յիշեցէք ի ս(ուր)բ յաղօթս ձեր և դուք յիշեալ լիջիք ի Ք(րիոտոս)է յԱ(ստուծո)յ մերմէ։ Ամէն։

2. **137բ** Ի թուականիս հայոց հազար հարիւրորդի քառասուն և մէկն աւելի (1692)՝ ի համսիանն համիրայ, որ էր օր երրորդի, ի քաղաքին, որ և Շիրազ կոչի, գրեցի գիրս վ(ա)սն յիշման ժամանակի անուամբս Սաֆար, որ եմ որդի Սէթի։

3. **137բ** Ի թուականիս արամազեան,
որ էր լցեալ կրկին շրջան,
յարաբարդեա եօթնտասան
և ութըն դար յաւելական,
ի յամսեանն հոռմացական
վեշտասան էր օր ծնընդեան,
անցեալ գրեցաք քարտիսիս բան,
թ(ի)վն ռճխբ (1693) յունարի ի քսաննմի։

4. **167բ-168ա** Շարադրեցաւ բանքս աշխարհաժողով փոքրիշատէ վասն վաճառականաց գնելու և վաճառելոյ, որ նորավարժ մանկունքն փոքրուտ ուսանեն վասն ի պէտս ապագայից իւրեանց, որ եղև Ըսպահան՝ Ջուղայու վանք Ս(ուր)բ Ամենափրկչումն, թ(ի)վն Փրկչին ռզճձէ (1687) ի թագաւորութե(ան) շահ Սլէմանին և կաթուղիկոսութ(եամ)բն տ(եառ)ն Եղիազարու և առաջնորդութ(եամ)բ Ըստէփանոս վարդապետին և իշխանութ(եամ)բ քալանթար խօջայ Աւետին և աշխատութ(եամ)բն անարժան վարպետ Կոստանդին յիշեցէք ի ս(ուր)բ յաղօթս ձեր և դուք յիշեալ լիջիք ի Ք(րիստո)սէ Ա(ստուծո)յ մերոյ։ Ամէն։

5. **168բ** տիխզիրացրու՞ բամբասօղ
և զչաքավինը՞ ո՛չ հանազօղ
1823

6. **236բ** Մի ապաղիր ի չար մարմինաց ոմն անցոր կեանքըս աշխարիս լեր և արթուն ըսգաստ հոգի, զի մի գայցէ գողն… ոյ առ քեզ սրպանելոյ գրչագրի… քլիզի՞ ի միղսամած՞ թօմյն թիվն… ի 26

7. **Պահպանակ Ա** Ա(ստուծօ)վ փոքր թուին ձգ շբաթ ա-ումն (1698) Ա(աստուա)ծ պտուղ արետ ինձ՝ Յովանջանիս, առաջնաձին, որ էր աղջիկ, անումն Մէրջան դրինք:

Թուին ձդ արամ իէ-ումն (1700) Ծատուրն ելաւ: Տէր Ա(աստուա)ծ երկար ամօք պահեսցէ:

Թուին ձզ համիրայ ի (1701) Դիլաքն ծնաւ: Ա(ստուա)ծ պահէ:

8. Ա(ստուա)ծ անեղան՞ հասակայ հայր գթութե(ան) ինձ ողորմեայ
Բ(ա)րս(ե)ղ
Ա(ստուա)ծ անեջան՞ հասկայ հայր գթութե(ան) ինձ ողորմեայ

9. Վրացատառ ու հայատառ խառը, իրար վրա գրված բառեր

10. **Պահպանակ Բ** ես՝ Յակոբս, էս գրեաց

11. Վրացատառ[1] ՝ ՝ ՝: ցնն գրհՁ: ցրաՁՊաՁան: Ֆաոր: գ ՕՉՁՁաՁ: տՕՓՁՕն: ՁաՁաՁն: ամեն

վրացերեն[2]՝ ՝: ՁՓ: ԴաՕՓՁրա տաՁարՕՖ [ան տաՁրՕՖՁՕ ան [Ձ]տաՁարանգՁլՕՖՕՁՕՁան ???] ան: ՕանՁրՕն Ձ: գանՊՁն 1796:

12. Խիկար իմաստասիրաց գիր է

13. **Պահպանակ Գ** Ես՝ Յակոբս, էս տետրին վերայ գրեցի… կարդայ… մին բերան յիշէ, էս տետր ըռաղամի դռներ շատ ունի ամա… (անընթեռնելի մի քանի տող, թանաքապատ)

Գ. Լոնդոն, Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, ձեռ. թիվ 14: Գրչության թվական՝ 1685-1687 թթ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Թերթ՝ 145: Տող՝ 21: Թուղթ: Միասյուն: Նոտրգիր: Նկարագրվել է 1918 թ.[3]:

Այս ձեռագիրը ևս պատկանում է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների վաղագույն ընդօրինակությունների շարքին՝ արտագրված լինելով 1687 թ.: Ձեռագրի առաջին մասը, սակայն, պետք է ընդօրինակված լինի 2 տարի ավելի վաղ, ինչպես երևում է «Հարցմունք և պատասխանի» երկի

[1] Վրացատառ գրության վերծանումը՝ «Ք: վասն գրչի վրացուական զայր գ իջեցաւ Թիփղիս քաղաքն: Ամէն»:

[2] Դժվարընթեռնելի այս հիշատակարանից կարելի է եզրակացնել, որ այն գրվել է 1796 թ. հունվարին Թավրիզում Հրեշտակապետաց օրը կամ եկեղեցում:

[3] **Baronian S. and Conybeare F.**, Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library, Oxford: Clarendon Press, 1918, p. 244-245.

հիշատակարանից։ Ձեռագիրը թերի է. պակասում են սկզբի մի շարք թերթեր հենց նշված երկից։ Ինչ վերաբերում է «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» ձեռնարկներին, ապա դրանք զբաղեցնում են 34ա-145բ թերթերը, իսկ բնագրերն արտացոլված են ամբողջությամբ։

Ի տարբերություն նախորդ երկուսի՝ այս ընդօրինակությունը հարուստ չէ հիշատակարաններով։ Այնուհանդերձ, կարելի է մատնանշել 1798 թվակիր մի հիշատարական, որը, համահունչ լինելով ձեռագրի բովանդակությանը, արտացոլում է չափի ու կշռի միավորների՝ գազի ու լիտրի մասին տեղեկատվություն (հիշատակարան 1)։

Հիշատակարաններ

1. **1բ** – Աստուծօվ ներքոյ գրեալս գազի և լտրի հարցումն այ՝

1 գազն 100 տուկրայ

1 տուկրէն 100 մզուր

1 գազն 16 գրէ

1 գրէն 6 տուկրա 25 մզուր

1 ղիտրն 100 տուկրայ

1 տուկրէն 100 մզուր

1 ղիտրն 40 սէր

1 սէրն 2 տուկրայ 50 մզուր

Թիվն 1798 համիրայ 3-ումն կամեցայ այսքան տողս …

2. **10ա** – Հարցմունք և պատասխանի արարեալ ումեմն Կոստանդ որդւոյ Ռամազի… ի վանս… Սուրբ Ամենափրկիչ կոչեցելոյ… դպրապետ և ուսուցիչ մանկանց երից հարիւրից, արհեստ համարողականաց ռաղամի… նորավարժից մանկանց և ուսումնասիրաց։ Ի թիվն Փրկչին 1685, յորում կատարեցաւ։

3. **59ա** – Շարադրեցաւ բանքս այս աշխարհաժողով փոքրիշատէ վասն վաճառականաց գնելու և վաճառելու, որ նորավարժ մանկունքն փոքրուտ ուսանեն վասն ի պէտս ապագայիս իւրեանց։ Որ եղեւ Ընպահան՝ Ջուղայու վանք Սբ Ամենափրկչումն, թիվն Փրկչին ՌՈՁԷ (1687) ի թագաւորութեան շահ Սուլէմանին և կաթուղիկոսութեամբն տեառն Եղիազարու և առաջնորդութեամբն Ըստէփանոս վարդապետին և իշխանութեամբն քալանթար խօջայ Աւետին և աշխատութեամբն անարժան վարպետ Կոստանդին, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս։ Ամէն։

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների հետագա ընդօրինակությունները (18-րդ դ.)

Դ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 10704։ Գրչության թվական՝ 1710 թ.։ Գրիչ՝ Յուսէփ որդի Սավարի։ Թերթ՝ 229։ Թուղթ։ 16,4 x 10,3։ Միասյուն։ Նոտրգիր։ Տող՝ 18-20։ Կազմ՝ կտդ, Ա փեղկին արձանագրու-

թիւն՝ «Շինեցաւ եւ գրեցաւ ձեռամբն Սավարի որդի Յուսէփին. յիշատակ է իւրն եւ իւր ծնողացն, թվն ՌՃԾԹ (1710)»: Նկարագրվել է 2007 թ.[1]:

Ձեռագրի սկզբում առկա է բովանդակության ցանկ՝ «Ցանգ գրգոյս» խորագրով: Ընդ որում, դրանում ներկայացված երկերի համեմատությունը ձեռագրի բուն բովանդակության հետ ի հայտ է բերում զգալի տարբերություններ, ինչը ցույց է տալիս, որ ձեռագիրն ինչ-որ մի ժամանակ մասնատվել է: Հիշատակարանների առումով գրչագիր այս օրինակը հարուստ չէ:

Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներին, ապա դրանք զբաղեցնում են ձեռագրի 25ա-156ա թերթերը: Բնագիրը գրեթե ամբողջությամբ է արտացոլված, գրչի ձեռագիրը գեղեցիկ է և միանգամայն ընթեռնելի, ուստի այս ընդօրինակությունը կարող է դասվել լավագույնների շարքին:

Հիշատակարաններ

1. **1ա** - 133 դ(ա)մ(ա)յ 4 (1748)… ռաթէն դառաւ…
2. **23բ** - Շարադրեցաւ բանքս այս ի Ըսպահան՝ Ջուղայու վանք՝ Ս(ուր)բ Ամենափրկչումն թ(ի)վն Փրկչին ռէճթ-ումն (1709) ի թագաւորութեան շայի Սուլթան Ուսընին, կաթողիկոսութեան տ(եառ)ն Աղեքսանդրին եւ առաջնորդութ(եամ)բն Մովսէս վարդապետին և իշխանութ(եամ)բն քալանթար խօջայ Զաքարին և աշխատութ(եամ)բն անարժան մեր վարպետ Կոստանդին յիշեցէք ի ս(ուր)բ աղօթն ձեր և դուք յիշեալ լիջիք ի Ք(րիստո)ս: Ամէն:
3. **24ա** - 223 (1932) տարուայ գրած է
4. **62բ** - Շարայդրեցաւ բանքս այս աշխարաժողով փոքրի շատէ վասն վաճառականաց գնելու և վաճառելու, որ նորայվարժ մանկունքն փոքրուտ ուսանեն վասն ի պէտս ապա գայիցն իւրեանց: Որ եղև Ըսպահան՝ Ջուղայոյ վանք սուրբ Ամենայնփրկչումն թիւն Փրկչին ռէճթ (1709) ի թագաւորութեան Շայ Սուլթան Յուսէնին եւ կաթողիկոսութեան տ(եառ)ն Աղեքսանդրին և առաջնորդութեան Մօվսէս ա(ստուա)ծաբան վարդապետին եւ իշխանութ(եամ)բն քալանթար խօջայ Զաքարին եւ աշխատութ(եամ)բն անարժան Կոստանդին յիշեցէք և դուք յիշեալ լիջիք ի Ք(րիստո)ս: Ամէն:

Ե. Լոնդոն, Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, ձեռ. թիվ 15: Գրչության թվական՝ 1712 թ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս: Գրիչ՝ Յաղուբ որդի Յավետի: Թերթ՝ 121+8 դատարկ: Թուղթ: Միասյուն: Նոտրգիր: Նկարագրվել է 1918 թ.[2]:

Ձեռագրի բովանդակության մասին պատկերացում կազմել ենք ձեռագրացուցակի միջոցով, ըստ որի՝ 4ա-110ա թերթերում ընդօրինակված են Կոստանդ Ջուղայեցու առնտրական ձեռնարկները: «Աշխարհաժո-

[1] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ **Ա. Մալխասյան,** Երևան, 2007, էջ 93:

[2] Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library, p. 245.

ղով»-ի ու «Դռներն ռաղամին»-ի այս օրինակի մասին չկա ոչ մի ցուցում առկա գրականության մեջ, ուստի Կոստանդ Ջուղայեցու դասագրքերի հայտնի ձեռագրերի շարքը պետք է համալրվի այս մեկով։

Զ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 5994։ Գրչության թվական՝ ԺԸ դ.։ Թերթ՝ 126։ Թուղթ։ 15 x 9,5։ Միասյուն։ Նոտրգիր, շղագիր։ Տող՝ 22։ Կազմ՝ ստվարաթուղթ։ Նկարագրվել է 1970 թ.[1]։

Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ընդօրինակություններից միակն է, որ հստակ թվագրություն չունի։ Ելնելով, սակայն, գրչության առանձնահատկություններից՝ նկարագրությունը կազմողներն այն թվագրել են 18-րդ դ.։

Վաճառականական ձեռնարկներն զբաղեցնում են 1ա-123բ թերթերը, ընդ որում՝ ձեռագրում ընդօրինակված են միայն այս երկերը։ Լուսանցագրերը բաց են թողնված՝ հավանաբար հետագայում լրացնելու նպատակադրումով։ Եթե ձեռագիրը չպարունակեր վաճառականական ձեռնարկներին չառնչվող երկու ուշագրավ հատվածներ, ապա այս ընդօրինակությունն արժեքավոր դժվար թե հնարավոր լիներ համարել։ Այսպես՝ «Աշխարհաժողով»-ի այն մասը, ուր ներկայացված է Հնդկաստանի՝ որպես առևտրական շուկայի նկարագրությունը, ընդմիջվում է մյուս ձեռագրերում չհանդիպող բոլորովին անծանոթ մի բնագրով՝ «Յաղագս առևտրի մարգարտի Հնտստան, որ վաճառականք չէվայ խսէպ ասեն»[2]։ Առանձին երկի տպավորություն թողնող այս հատվածը բաժանված է 21 գլուխների, որոնցից յուրաքանչյուրում պատմվում է թանկարժեք քարի մի տեսակի մասին՝ մարգարիտ, ալմազ, կարմիր յաղութ և այլն։ Եթե բնագիրը չունենար որևիցե հիշատակարան, այդպես էլ անհայտ կմնար այս երկի հեղինակի հարցը. «Սորա տեսանօղն և գրօղն խօճայ Մինասեան պարոն Սաֆրազի որդի Աղամալ աղան է ելել, Ա(ստուա)ծ լուսաւորէ իւր հոգին, որ յետ վաղճանին իւր դուստր Սօփիայ խանումն ետ ինձ այս օրինակս կամ մարգարտին չէվին հիսապի օրինակն, որ օրինակեցի։ Ա(ստուա)ծ իւրն արևշատութիւն տայ, Ա(ստուա)ծ իւր խնդրուվածքն կատարէ։ Գծօղ սորին՝ Նազարէթի որդի անպիտան Միքայէլ՝ չնչին ծառայ»[3]։ Հիշատակարանից կարելի է համոզվել, որ թանկարժեք քարերի առևտրին վերաբերող այս բնագրի հեղինակը Մինասյան նշանավոր ընտանիքից Սաֆրազի որդի Աղամալն է[4]։ Վերջինիս դուստր Սոփիան այն տվել է Միքայելին, որն էլ, իր հերթին, ընդօրինակել է այն։

---

[1] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 228։

[2] Մատենադարան, ձեռ. թիվ 5994, թ. 4ա-12բ։

[3] Նույն տեղում, թ. 12բ։

[4] Մինասյան ընտանիքի տոհմածառը տե՛ս **Aslanian S.**, From the Indian Ocean, p. 162.

Այս ձեռագիրն առանձնահատուկ դարձնող մյուս բնագրային շեղումն ավելի ընդարձակ է: Նախքան վաճառականական խնդիրների ընդօրինակմանն անցնելը «Ա(ստուծо)վ ներքոյ գրեալս Մատրասին մարգարտին չէվայ հիսապն է» արտահայտությունից հետո գրիչը զետեղել է մարգարտի առքուվաճառքին վերաբերող մի բնագիր՝ կից բազմաթիվ աղյուսակներով[1]: Մինասյան վաճառականական ընտանիքի պատմության[2] տեսանկյունից բացառիկ այս նյութերը, որոնք մինչև այսօր որևիցէ ուշադրության չեն արժանացել[3], ուշագրավ են դարձնում Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներն ամփոփող այս ձեռագիրը:

Եզրակացություն

Մոտ երկու տասնամյակ առաջ հայ վաճառականության պատմության ուսումնասիրողներից Գեղամ Գևոնյանը Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկների հրատարակումն ու թարգմանությունը համարել է հայ առևտրի պատմության առաջահերթ խնդիրներից մեկը[4]: Այս համապատկերում պետք է նշել, որ ձեռնարկների ձեռագրական ավանդույթի մասին ամբողջական պատկերացումը առաջին քայլն է բնագրերը գիտական հրատարակության պատրաստելու ճանապարհին:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթի ներկայացումը թույլ է տալիս ընդլայնել այդ երկերն ամփոփող հայտնի ձեռագրերի շրջանակը՝ այն հասցնելով 6 գրչագիր օրինակի (3-ը՝ Երևան, 2-ը՝ Օքսֆորդ, 1-ը՝ Նոր Ջուղա): Դրանց երբևէ չհրատարակված հիշատակարանները թույլ են տալիս պատկերացնել ձեռագրերից յուրաքանչյուրի անցած ճանապարհը, ինչպես նաև՝ արձանագրել դրանց շրջանառությունը վաճառականական միջավայրում: Ձեռագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև մատնանշելու բնագրային շեղումների բոլոր դեպքերը՝ ուշադրություն հրավիրելով Կոս-

---

[1] Մատենադարան, ձեռ. թիվ 5994, թ. 27բ-44բ:

[2] Մինասյան վաճառականական ընտանիքի մասին մանրամասն տե՛ս **Խաչիկյան Շ.**, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, 1988, էջ 81-100, **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean, pp. 159-164, **Թաջիրեան Ս.**, Խոջա Մինաս Մինասեանի Հաշուեմատեանը, «Հանդէս ամսօրեայ», 2019, թ. 1-12, էջ 195-296:

[3] Հավելենք, որ Մատենադարանի թիվ 5994 ձեռագրի այս երկու բնագրերը, որոնք որևիցե աղերս չունեն Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկների հետ, հանգամանալից ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) ուսանող Սոնա Թաջիրյանը “Involvement of the Armenian Mercantile Community of New Julfa in the Early Modern Global Trade of Diamonds and Gemstones” խորագրով իր ատենախոսության շրջանակներում:

[4] **Depeyrot G., Kévonian K., Mouradian C.**, Groupe de recherches d'histoire arménienne «monnaies, réseaux, politique», «*Les Cahiers du Centre de Recherches Historiques*», 2000, no. 24 (en ligne, https://journals.openedition.org/ccrh/2082#tocto1n2, մատչումը՝ 15.10.2019).

տանդ Ջուղայեցու ձեռնարկ-դասագրքերի հետ աղերս չունեցող, սակայն կարևոր նշանակություն ունեցող մի քանի հատվածների վրա։

Саркис Балдарян, Рукописная традиция торговых пособий Константа Джугаеци - Цель статьи - пролить свет на рукописную традицию торговых пособий Константы Джугаеци, учителя в школе торговли в Новой Джульфе на рубеже восемнадцатого века: “Компендиум” и “Введение в арифметику”. Опираясь на армянские рукописи, хранящиеся в коллекциях рукописей Еревана, Оксфорда и Новой Джульфы, автор показывает, что коммерческие справочники Константа Джугаеци хранятся в 6 рукописях, самая ранняя из которых относится к 1687 году. В статье особое внимание уделяется количество колофонов, написанных на разных страницах рукописей, которые помогают проследить историю каждой из рукописей и получить четкое представление о том, где использовались руководства Константа и как они распространялись в глобальной торговой сети Новой Джульфы.

Sargis Baldaryan, Manuscript Tradition of Trade Manuals of Constant of Julfa – The aim of the essay is to shed some light on the manuscript tradition of trade manuals of Constant of Julfa, a schoolmaster in a trade school in New Julfa at the turn of the eighteenth century – “Compendium” and “Introduction to Arithmetic”. Relying on Armenian manuscripts stored in the depositories of manuscript collections in Yerevan, Oxford, and New Julfa, the author shows that Constant’s commercial handbooks are preserved in 6 manuscripts, earliest of them going back to 1687. In the paper special attention is paid to a number of colophons written on different pages of manuscripts which help us to trace the history of each of them and to get a clear understanding of where Constant’s manuals were used and how they circulated in the Julfan global trade network.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ըստ հնագիտական նյութերի և անտիկ գրավոր աղբյուրների) ----------3

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՐՑԱԽ ----------17

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԴԱՐՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ----------32

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄԵԿ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԾՐԱԳԻՐԸ ----------48

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԿԻԶԲԸ ----------61

ՄԱՐԻԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ----------72

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ---------- 81

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ----------92

ԱՍԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՈՒՅՂՈՒՐՆԵՐԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (IX-XV ԴԱՐԵՐ) ----------105

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԿԱՐՍ ՔԱՂԱՔԸ ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻ ԱՉՔԵՐՈՎ ----------112

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ----------122

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ (ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ)----------139

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՒՄ ----------145

ԱՇԽԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ----------158

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ ----------170

ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱԳՐՈԱՊԱՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ----------178

ԱՐՄԱՆ ԱՍՐՅԱՆ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ----------186

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ
ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)--------195

ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՀՈԳԵԳՐԱՄՄԱՆ ----------204

ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ ----------208

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ----------216